# ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՈՉԸ

Մոսկվայում հրատարակվող «Журнал Московской патриархии» 1943 թ. սեպտեմբերի 12-ի №1-ում հրապարակված է ռուսաց եկեղեցու եպիսկոպոսների ընդհանուր ժողովի կողմից համայն աշխարհի քրիստոնյաներին ուղղված կոչը, որով ժողովը դատապարտում է բոլոր նրանց, ովքեր աջակցություն ցույց կտան գերմանական ֆաշիզմին։ Կոչը հորդորում է համայն աշխարհի քրիստոնյաներին համախմբվել և միահամուռ ուժերով պայքարել ֆաշիզմի դեմ, և վերջնական հաղթանակ տանել ընդհանուր ատելի թշնամու դեմ։ Կոչի մեջ կարդում ենք հետևյալը.

«Քրիստոնյա եղբայրներ ամբողջ աշխարհի։ Ներկայումս բոլորս ապրում ենք բացառիկ պատմական մի ժամանակ։ Ամբողջ աշխարհը բռնկված է պատերազմի հրդեհով, արյունը հեղեղում է Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի դաշտերը. գերմանացիների կողմից գրավված բազմաթիվ երկրների բնակչությունն անլուր ծաղրանքի ու լլկանքի է ենթարկվում, ստրկացվում, բնաջինջ արվում. մեր սրբությունները ոչնչացվում են, դարավոր կուլտուրայի արժեքները կործանվում։— Ֆաշիզմն ամենուրեք ավեր ու մահ է սփռում։

Մեր մայր-հայրենիքն իր վրա է ընդունել գերմանական հարձակման հիմնական հարվածը, բայց Աստծու օգնությամբ, բոլոր ուժերը լարելով, իր հերոսական Կարմիր Բանակի փայլուն հաղթանակներով դուրս է մղում իր սահմաններից ուխտադրուժ թշնամուն. և ծանր վերքեր է հասցնում նրան, որն արդեն արյունաքամ է լինում, բայց դեռևս ուժեղ է։ Մեր ժողովուրդը, բոլոր ազատասեր ժողովուրդների հետ միասին, պայքարում է հանուն արյունոտ ֆաշիզմի իսպառ ոչնչացման ամբողջ աշխարհում, որովհետև մարդկային ոգու խոյանքում չկա ավելի բարձր և ավելի վեհ բան, քան իրեն իսկ պատերազմին մահ պատճառելը։

Ռուսական ուղղափառ եկեղեցին այս պատմական օրերին, ամբողջ երկրի և իր ժողովրդի հետ միասին ապրելով մեր վրա տեղացող ծանր փորձությունները, դիմում է ամբողջ աշխարհի քրիստոնյաներին և կոչ է անում համերաշխ, եղբայրաբար ու սերտորեն միանալ հանուն Քրիստոսի՝ ընդհանուր թշնամու դեմ վերջնական հաղթանակ տանելու համար։

Ուղղափառ եկեղեցին համայն եպիսկոպոսների ժողովի միահամուռ ձայնով, որոնք ներկայումս Մոսկվայում ժողովվել են Պատրիարքի ընտրության համար, կոչ է անում ամբողջ աշխարհի քրիստոնյաներին լարել բոլոր ջանքերը համաշխարհային այս պայքարում, որ մղվում է հանուն՝ Հիտլերի կողմից ոտնահարվող քրիստոնեության իդեալների, հանուն քրիստոնեական եկեղեցիների ա- հանուն քրիստոնեական եկեղեցիների ազատության, երջանկության և կուլտուրայի։

Ռուսական ուղղափառ եկեղեցին ամենից առաջ դիմում է ձեզ, քրիստոնյա եղբայր-մարտիկներ, որ ներկայումս կռիվ եք մղում մեր բոլոր դաշնակից երկրների բանակներում։ Ամրակուռ հավատով, հաստատուն համոզվածությամբ ձեր գործի արդարության, պայծառ գիտակցելով, որ այս պատերազմը գաղափարական պատերազմ է, սխրագործության պատերազմ

է, պատերազմ է հանուն ճնշվածների, պատերազմ է հանուն դարավոր ստրկությունների փրկության,— այդ հավատով, հանուն Տիրոջ, գնացեք վերականգնելու թշնամու գրաված հողերը, ազատագրելու նրա կողմից ստրկացված ժողովուրդներին, դադարեցնելու նրա անօրինակ չարագործությունները, «ասել կապելոց՝ թէ ելէ՛ք, և որ ի խաւարին իցեն՝ թէ յայտնեցարուք»:

Ուղղափառ եկեղեցին կոչ է անում և ձեզ, բոլոր դաշնակից երկրների քրիստոնյաներ, որ աշխատում էք ի պաշտպանություն հայրենի հողերի, ընդդեմ ընդհանուր թշնամու, տասնապատկելու ձեր ջանքերը ռազմաճակատին օգնելու համար, հիտլերյան հրոսակախմբերի դեմ լիակատար հաղթանակ տանելու համար:

Նա կոչ է անում բոլոր այն երկրների քրիստոնյաներին, որոնք ժամանակավորապես օկուպացված են Հիտլերի կողմից, բոլոր հնարավոր միջոցներով թշնամու թիկունքում օգնելու ճնշված ժողովուրդների փրկության ընդհանուր գործին, լի այն համոզմամբ, որ մոտ է հաղթանակի և ֆաշիստական լծից ազատագրվելու ժամը:

Նա խնդրում է բոլոր երկրների քրիստոնյաներին միաձուլվել՝ Տիրոջը մատուցվող ընդհանուր աղոթքում՝ խնդրելով շնորհել շուտափույթ հաղթանակ այս պատմական արյունալի ճակատամարտում, որ մղվում է հանուն քրիստոնեության և համամարդկային իդեալների հաղթանակի ընդդեմ աշխարհին կործանում բերող ֆաշիզմի:

Նա լիահույս է, որ բոլոր դաշնակից երկրների լարված ջանքերով այս բարենպաստ մոմենտին, երբ մեր հարազատ ռուսական Կարմիր Բանակը հաղթականորեն դուրս մղելով թշնամուն մեր սահմաններից, իր դեմ է գրավել թշնամական խոշոր ուժեր, կստեղծվի, վերջապես, վաղուց սպասվող երկրորդ ճակատը ու կըմոտեցնի հաղթանակը և խաղաղությունը ժողովուրդներին:

Նա հավատում է, որ անօրենությունը և անարդարությունը չեն կարող հաջողությամբ պսակվել, որ ֆաշիստների հարձակումը կուղղվի հենց իրենց դեմ, որ, ինչպես Քրիստոս է ասում, «Սուր վերցնողը սրով էլ կընկնի», որ այն արդարացի և սուրբ ցասումը, որով ներկայումս համակված են բոլոր դաշնակից երկրների քրիստոնյաները, կխորտակի բոլոր պատնեշները, որ կանգնեցնում է Հիտլերը մեր բոլորիս դեմ խաղաղ և հանգիստ կյանքի ճանապարհին, և բուռն թափով կշնջի երկրի երեսից ֆաշիզմը ու կվերադարձնի աշխարհին խաղաղություն, ազատություն և երջանկություն:

Եվ թող Տերը օրհնի բոլորիդ, քրիստոնյա եղբայրներ, պայքարելու հանուն արդար գործի, հանուն ազատության, բարության և արդարության, հանուն հաղթանակի համայն աշխարհում:

**ՍԵՐԳԻՅ**, Միտրոպոլիտ Մոսկվայի և Կոլոմնայի:

**ԱԼԵՔՍԻՅ**, Միտրոպոլիտ Լենինգրադի.

**ՆԻԿՈԼԱՅ**, Միտրոպոլիտ Կիևի և Գալիցիայի.

**ԼՈՒԿԱ**, Արքեպիսկոպոս Կրասնոյարսկի.

**ԻՈԱՆՆ**, Արքեպիսկոպոս Սարապուլի.

**ԱՆԴՐԵՅ**, Արքեպիսկոպոս Կազանի.

**ԱԼԵՔՍԻՅ**, Արքեպիսկոպոս Կույբիշևի մարզի.

**ՍՏԵՖԱՆ**, Արքեպիսկոպոս Ուֆայի.

**ՍԵՐԳԻՅ**, Արքեպիսկոպոս Գորկու և Արզամասի մարզերի.

**ԻՈԱՆՆ**, Արքեպիսկոպոս Յարոսլավլի և Ռոստովի.

**ԱԼԵՔՍԻ**, Արքեպիսկոպոս Ռյազանի.

**ՎԱՍԻԼԻՅ**, Արքեպիսկոպոս Կալինինի մարզի.

**ՎԱՐՖՈԼՈՄԵՅ**, Արքեպիսկոպոս Նովոսիբիրսկի և Բառնաուլի.

**ԳՐԻԳՈՐԻՅ**, Արքեպիսկոպոս Սարատովի և Ստալինգրադի.

**ԱԼԵՔՍԱՆԴՐ**, Եպիսկոպոս Մոլոտովի մարզի.

**ՊԻՏԻՐԻՄ**, Եպիսկոպոս Կուրսկի.

**ՎԵՆԻԱՄԻՆ**, Եպիսկոպոս Կիրովի մարզի.

**ԴԻՄԻՏՐԻՅ**, Եպիսկոպոս Ուլյանովսկի մարզի.

**ԵԼԵՎՖԵՐԻՅ**, Եպիսկոպոս Ռոստովի: